Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Պ-632-10.07.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պրոբացիայի մասին» 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-48-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ուղղման,» բառը հանել:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ուղղմանն ու» բառերը հանել:

Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Այլընտրանքային խափանման միջոցի կատարումը սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ապահովում է Պրոբացիայի ծառայությունը՝ իր ստորաբաժանումների միջոցով, որոնք սահմանված են պրոբացիայի ծառայության կանոնադրությամբ:».

2) 6-րդ մասի «, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա» բառերը հանել.

3) 10-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Եթե տեխնիկական՝ գլոբալ տեղորոշման համակարգի (GPS) կամ բջջային կապի անհասանելիության կամ էլեկտրաէներգիայի բացակայության կամ տնային կալանքի վայրը բնակվելու համար ոչ պիտանի լինելու պատճառներով էլեկտրոնային հսկողության սարքավորումները հնարավոր չէ տեղադրել դատական ակտում նշված խափանման միջոցը՝ տնային կալանքը, կրելու համար սահմանված վայրում, կամ մեղադրյալը չի հանդիսանում դատական ակտում նշված տնային կալանք խափանման միջոցը կրելու համար սահմանված տան կամ բնակարանի սեփականատերը, իսկ սեփականատերը չի տալիս իր տանը կամ բնակարանում էլեկտրոնային հսկողության սարքավորումներ տեղադրելու համաձայնություն, ապա Պրոբացիայի ծառայությունը էլեկտրոնային հսկողության սարքավորումները տեղադրելու անհնարինության մասին անհապաղ հայտնում է վարույթն իրականացնող մարմնին:».

4) 11-րդ մասը ուժը կորցրած ճանաչել

Հոդված 5. Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Վերահսկողություն իրականացնելիս պրոբացիայի ծառայողն իրավունք ունի պրոբացիայի շահառուին կանչելու Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանում, ստանալու գրավոր կամ բանավոր պարզաբանումներ, հոգեբանական օգնություն ցույց տվող համապատասխան կառույցից պահանջելու տեղեկություններ նրա վարքագծի վերաբերյալ, ինչպես նաև իրականացնելու վերահսկողության պլանից բխող այլ գործողություններ: Հոգեբանական օգնությունը ցույց է տրվում համապատասխան դատական ակտի հիման վրա՝ Պրոբացիայի ծառայության կողմից հոգեբանական կազմակերպությունների ներգրավման միջոցով: Հոգեբանական օգնություն ցույց տվող կազմակերպություններն ընտրվում են գնման համապատասխան ընթացակարգերի իրականացման արդյունքում:»:

Հոդված 6. Օրենքի 23-րդ հոդվածում.

1) Վերնագրի, 1-ին, 2-րդ և 8-րդ մասերի «, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու» բառերը հանել.

2) 2-րդ մասի «պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու» բառերը հանել.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ձեկույց տրամադրելու համար տարածքային մարմինն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում կապ է հաստատում քրեակատարողական հիմնարկի հետ և պայմանավորվում հանդիպում ունենալ դատապարտյալի հետ, համապատասխան քրեակատարողական հիմնարկից պահանջում է անձի անձնական գործը կամ տեղում ծանոթանում անձնական գործին և կազմում է դատապարտյալի անձնական գործը:».

4) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

5) 5-րդ մասում «հարևանների» բառից հետո լրացնել «, տուժողների կամ տուժողների ներկայացուցիչների» բառերով.

6) 7-րդ մասի 14-րդ կետի «ուղղմանը և» բառերը հանել:

Հոդված 7. Օրենքի 24-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «Պրոբացիայի ծառայությունը» բառերից հետո լրացնել «, իսկ զինծառայողի նկատմամբ՝ նրա զորամասի հրամանատարությունը» բառերով.

2) 5-րդ մասում «Դատապարտյալին» բառը փոխարինել «Պրոբացիայի շահառուին» բառով.

3) 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Այն դեպքում, երբ իրավասու մարմիններից ստացված տեղեկությամբ հաստատվում է պրոբացիայի շահառուի՝ զինված հակամարտության արդյունքում ռազմական գործողություններին (մարտական առաջադրանքներին) մասնակցությունը, որի հետևանքով վերջինս անհետ կորել է և նրագտնվելու վայրը իրավասու մարմիններին պարզել չի հաջողվել

պրոբացիայի շահառուի՝ հետախուզում հայտարարելուց մեկ տարված ընթացքում, տարածքային մարմինը դատարան է ներկայացնում միջնորդություն՝ պրոբացիայի շահառուի նկատմամբ հետախուզումը դադարեցնելու մասին:».

4) 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո գնահատում է նրա ռիսկերը և կարիքները, որի հիման վրա ընդունում է որոշում՝ ցածր ռիսկ ունեցող շահառուներին երկու ամսվա ընթացքում մեկ անգամ, միջին ռիսկ ունեցող շահառուներին ամիսը մեկ անգամ, իսկ բարձր ռիսկ ունեցող շահառուներին մեկ ամսվա ընթացքում առնվազն երկու անգամ Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանում ներկայանալու մասին, որը ներառվում է վերահսկողության պլանի մեջ: Ռիսկերի և կարիքների գնահատումը կարող է վերանայվել յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ կամ պրոբացիայի շահառուի կյանքում կատարված փոփոխությունների դեպքում: Սույն մասը տարածվում է այն դեպքերի վրա, երբ պրոբացիայի շահառուի նկատմամբ վերասոցիալականացման և վերականգնողական աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը բացակայում է:».

5) 24-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված Պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողության ժամկետը հաշվարկվում է ազատազրկման ձևով պատժի կրումից ազատվելու օրվանից: Պատիժը պայմանականորեն չկիրառված Պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողության ժամկետը հաշվարկվում է Պրոբացիայի ծառայությունում հաշվառման վերցնելու օրվանից:»:

Հոդված 8. Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետի «կամ հետպատժյա» բառերը հանել:

Հոդված 9. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 11-րդ կետում «ռիսկերի» բառից առաջ լրացնել «օրենքով նախատեսված դեպքերում» բառերով.

2) 14-րդ կետում «վերասոցիալականացման» բառից առաջ լրացնել «օրենքով նախատեսված դեպքերում» բառերով:

Հոդված 10. Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի «կամ հետպատժյա փուլում» բառերը հանել:

Հոդված 11. Օրենքի 44-րդ հոդվածում.

1) 4-րդ մասում «դատարանի» բառը փոխարինել «Պրոբացիայի ծառայության» բառերով.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պրոբացիայի շահառուի միջոցների հաշվին, ինչպես նաև պետական բյուջեի միջոցների հաշվին էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 12. Օրենքի 48-րդ հոդվածում.

1) 2-րդ և 3-րդ մասերում «ծառայող» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ծառայության պետ» բառերով.

2) 3-րդ մասում «մեկ» բառը փոխարինել «երեք» բառով:

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պրոբացիայի մասին» 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-48-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «ուղղման,» բառը հանել:

Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ուղղմանն ու» բառերը հանել:

Հոդված 4. Օրենքի 12-րդ հոդվածում.

1) 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1. Այլընտրանքային խափանման միջոցի կատարումը սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ապահովում է Պրոբացիայի ծառայությունը՝ իր ստորաբաժանումների միջոցով, որոնք ~~սահմանվում~~ **սահմանված** են պրոբացիայի ծառայության ~~ներքին կանոնակարգով~~ **կանոնադրությամբ**:».

2) 6-րդ մասի «, ինչպես նաև պրոբացիայի շահառուի վերաբերյալ ռիսկերի և կարիքների գնահատման հիման վրա» բառերը հանել.

3) 10-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

~~«Եթե էլեկտրոնային հսկողության սարքավորումները տեխնիկական պատճառներով հնարավոր չէ տեղադրել դատական ակտում նշված՝ տնային կալանք խափանման միջոցը կրելու համար սահմանված վայրում, կամ մեղադրյալը չի հանդիսանում դատական ակտում նշված տնային կալանք խափանման միջոցը կրելու համար սահմանված տան կամ բնակարանի սեփականատերը, իսկ սեփականատերը չի տալիս իր տանը կամ բնակարանում էլեկտրոնային հսկողության սարքավորումներ տեղադրելու համաձայնություն, ապա Պրոբացիայի ծառայությունը չի տեղադրում էլեկտրոնային հսկողության սարքավորումները և անհապաղ դրա մասին հայտնում է վարույթն իրականացնող մարմնին»:~~

«Եթե տեխնիկական՝ գլոբալ տեղորոշման համակարգի (GPS) կամ բջջային կապի անհասանելիության կամ էլեկտրաէներգիայի բացակայության կամ տնային կալանքի վայրը բնակվելու համար ոչ պիտանի լինելու պատճառներով էլեկտրոնային հսկողության սարքավորումները հնարավոր չէ տեղադրել դատական ակտում նշված խափանման միջոցը՝ տնային կալանքը, կրելու համար սահմանված վայրում, կամ մեղադրյալը չի հանդիսանում դատական ակտում նշված տնային կալանք խափանման միջոցը կրելու համար սահմանված տան կամ բնակարանի սեփականատերը, իսկ սեփականատերը չի

տալիս իր տանը կամ բնակարանում էլեկտրոնային հսկողության սարքավորումներ տեղադրելու համաձայնություն, ապա Պրոբացիայի ծառայությունը էլեկտրոնային հսկողության սարքավորումները տեղադրելու անհնարինության մասին անհապաղ հայտնում է վարույթն իրականացնող մարմնին:».

4) 11-րդ մասը ուժը կորցրած ճանաչել

Հոդված 5. Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Վերահսկողություն իրականացնելիս պրոբացիայի ծառայողն իրավունք ունի պրոբացիայի շահառուին կանչելու Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանում, ստանալու գրավոր կամ բանավոր պարզաբանումներ, հոգեբանական օգնություն ցույց տվող համապատասխան կառույցից պահանջելու տեղեկություններ նրա վարքագծի վերաբերյալ, ինչպես նաև իրականացնելու վերահսկողության պլանից բխող այլ գործողություններ: Հոգեբանական օգնությունը ցույց է տրվում համապատասխան դատական ակտի հիման վրա՝ Պրոբացիայի ծառայության կողմից հոգեբանական կազմակերպությունների ներգրավման միջոցով: Հոգեբանական օգնություն ցույց տվող կազմակերպություններն ընտրվում են գնման համապատասխան ընթացակարգերի իրականացման արդյունքում:»:

Հոդված 6. Օրենքի 23-րդ հոդվածում.

1) Վերնագրի, 1-ին, 2-րդ և 8-րդ մասերի «, պատիժն ավելի մեղմ պատժով փոխարինելու» բառերը հանել.

2) 2-րդ մասի «պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու» բառերը հանել.

3) 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3. Ձեկույց տրամադրելու համար տարածքային մարմինն անհապաղ, բայց ոչ ուշ, քան երեք աշխատանքային օրվա ընթացքում կապ է հաստատում քրեակատարողական հիմնարկի հետ և պայմանավորվում հանդիպում ունենալ դատապարտյալի հետ, համապատասխան քրեակատարողական հիմնարկից պահանջում է անձի անձնական գործը կամ տեղում ծանոթանում անձնական գործին և կազմում է դատապարտյալի անձնական գործը:».

4) 4-րդ մասը ուժը կորցրած ճանաչել.

5) 5-րդ մասում «հարևանների» բառից հետո լրացնել «, տուժողների կամ տուժողների ~~իրավահաջորդների~~ **ներկայացուցիչների**» բառերով.

6) 7-րդ մասի 14-րդ կետի «ուղղմանը և» բառերը հանել:

Հոդված 7. Օրենքի 24-րդ հոդվածում.

1) 1-ին մասում «Պրոբացիայի ծառայությունը» բառերից հետո լրացնել «, իսկ զինծառայողի նկատմամբ՝ նրա զորամասի հրամանատարությունը» բառերով.

2) 5-րդ մասում «Դատապարտյալին» բառը փոխարինել «Պրոբացիայի շահառուին» բառով.

3) 7-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Այն դեպքում, երբ իրավասու մարմիններից ստացված տեղեկությամբ հաստատվում է պրոբացիայի շահառուի՝ զինված հակամարտության արդյունքում ռազմական գործողություններին (մարտական առաջադրանքներին) մասնակցությունը, որի հետևանքով վերջինս անհետ կորել է և նրագտնվելու վայրը իրավասու մարմիններին պարզել չի հաջողվել պրոբացիայի շահառուի՝ հետախուզում հայտարարելուց մեկ տարված ընթացքում, տարածքային մարմինը դատարան է ներկայացնում միջնորդություն՝ պրոբացիայի շահառուի նկատմամբ հետախուզումը դադարեցնելու մասին:».

4) 12-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«12. Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանումը պրոբացիայի շահառուին հաշվառման վերցնելուց հետո գնահատում է նրա ռիսկերը և կարիքները, որի հիման վրա ընդունում է որոշում՝ ցածր ռիսկ ունեցող շահառուներին երկու ամսվա ընթացքում մեկ անգամ, միջին ռիսկ ունեցող շահառուներին ամիսը մեկ անգամ, իսկ բարձր ռիսկ ունեցող շահառուներին մեկ ամսվա ընթացքում առնվազն երկու անգամ Պրոբացիայի ծառայության համապատասխան ստորաբաժանում ներկայանալու մասին, որը ներառվում է վերահսկողության պլանի մեջ: Ռիսկերի և կարիքների գնահատումը կարող է վերանայվել յուրաքանչյուր երկու ամիսը մեկ անգամ կամ պրոբացիայի շահառուի կյանքում կատարված փոփոխությունների դեպքում: Սույն մասը տարածվում է այն դեպքերի վրա, երբ պրոբացիայի շահառուի նկատմամբ վերասոցիալականացման և վերականգնողական աշխատանքներ իրականացնելու անհրաժեշտությունը բացակայում է:».

5) 24-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ.

«Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատված Պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողության ժամկետը հաշվարկվում է ազատազրկման ձևով պատժի կրումից ազատվելու օրվանից: Պատիժը պայմանականորեն չկիրառված Պրոբացիայի շահառուի նկատմամբ վերահսկողության ժամկետը հաշվարկվում է Պրոբացիայի ծառայությունում հաշվառման վերցնելու օրվանից:»:

Հոդված 8. Օրենքի 29-րդ հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 5-րդ մասերի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետի «կամ հետպատժյա» բառերը հանել:

Հոդված 9. Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 11-րդ կետում «ռիսկերի» բառից առաջ լրացնել «օրենքով նախատեսված դեպքերում» բառերով.

2) 14-րդ կետում «վերասոցիալականացման» բառից առաջ լրացնել «օրենքով նախատեսված դեպքերում» բառերով:

Հոդված 10. Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի «կամ հետպատժյա փուլում» բառերը հանել:

Հոդված 11. Օրենքի 44-րդ հոդվածում.

1) 4-րդ մասում «դատարանի» բառը փոխարինել «Պրոբացիայի ծառայության» բառերով.

2) 5-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պրոբացիայի շահառուի միջոցների հաշվին, ինչպես նաև պետական բյուջեի միջոցների հաշվին էլեկտրոնային հսկողության միջոցների կիրառման ֆինանսավորման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 12. Օրենքի 48-րդ հոդվածում.

1) 2-րդ և 3-րդ մասերում «ծառայող» բառերը համապատասխան հոլովաձևերով փոխարինել «ծառայության պետ» բառերով.

2) 3-րդ մասում «մեկ» բառը փոխարինել «երեք» բառով:

Հոդված 13. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ *Պ-632-10.07.2023-ՊԻ-011/1)* ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

№	**Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը**	**Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը**	**Առաջարկություն (փոփոխություն, լրացում)**	**Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը**	**Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը**
1.	***Կառավարություն***	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. Այլընտրանքային խափանման միջոցի կատարումը սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ապահովում է Պրոբացիայի ծառայությունը՝ իր ստորաբաժանումների միջոցով, որոնք սահմանված են պրոբացիայի ծառայության կանոնադրությամբ:».»:	Ընդունվել է:	Ընդունվել է :

2.	***Կառավարություն***	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) 10-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Եթե տեխնիկական՝ գլոբալ տեղորոշման համակարգի (GPS) կամ բջջային կապի անհասանելիության կամ էլեկտրաէներգիայի բացակայության կամ տնային կալանքի վայրը բնակվելու համար ոչ պիտանի լինելու պատճառներով էլեկտրոնային հսկողության սարքավորումները հնարավոր չէ տեղադրել դատական ակտում նշված խափանման միջոցը՝ տնային կալանքը, կրելու համար սահմանված վայրում, կամ մեղադրյալը չի հանդիսանում դատական ակտում նշված տնային կալանք խափանման միջոցը կրելու համար սահմանված տան կամ բնակարանի սեփականատերը, իսկ սեփականատերը չի տալիս իր տանը կամ բնակարանում էլեկտրոնային հսկողության սարքավորումներ տեղադրելու համաձայնություն, ապա Պրոբացիայի ծառայությունը էլեկտրոնային հսկողության սարքավորումները տեղադրելու անհնարինության մասին անհապաղ	Ընդունվել է:	Ընդունվել է :

			հայտնում է վարույթն իրականացնող մարմնին:».»:		
3.	***Կառավարություն***	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետ	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում «տուժողների կամ տուժողների իրավահաջորդների» բառերը փոխարինել «տուժողների կամ տուժողների ներկայացուցիչների» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է :